ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ
12 նոյեմբերի 2024 թվական, N 129-Ա

ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ՝ ՏՎՅԱԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ) ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշման պահանջներով,Հայաստանի Հանրապետության 19.11.2019թ. 225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 04.06.2020թ. N 1023-Ն որոշումով, հիմք ընդունելով Ալավերդի համայնքի ղեկավարի 16.10.2024թ. N 1548-Ա, 21.10.2024թ. N 1581-Ա, 05.09.2024թ. N 1333-Ա17.09.2024թ. N 1365-Ա, 19.12.2024թ. N 1446-Ա որոշումները, սեփականության իրավունքի N 24102024-06-0059 (գաղտնաբառ՝ Q8JSRGSGKKRZ), N 30102024-06-0049 (գաղտնաբառ՝ ICNB575KQYAJ), N 31102024-06-0041 (գաղտնաբառ՝ KFN689VHDXXZ), N 31102024-06-0058 (գաղտնաբառ՝ KAL2XA2LWISR), N 05112024-06-0020, (գաղտնաբառ՝ XWVSFEKXWILB) վկայականները, հաշվի առնելով, որ կառույցներն իրականացրած անձանց կողմից ընդունվել են ուղղակի վաճառքով գնելու առաջարկը՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. ՀՀ Լոռումարզ, համայնք Ալավերդի, Ալավերդի քաղաք, Էնգելս թաղամաս, 16/5 հասցեումգտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 16.10.2024թ. N 1548-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 36.6 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը սահմանված դրույքաչափին համապատասխան արժեքով և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0.00366 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-002-0160-0013/ ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքով օտարել Անատոլի Հակոբի Ջամալյանին:
2. ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, Ալավերդի քաղաք, Էնգելս թաղամաս, 18/3 հասցեումգտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 21.10.2024թ. N 1581-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 26.96 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը սահմանված դրույքաչափին համապատասխան արժեքով և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0.0027 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի

կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-002-0161-0040/ ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքով օտարել Արթուր Սամվելի Մադոյանին:

3. ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, գյուղ Նեղոց, Թբիլիսյան խճուղի, 61/1 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 05.09.2024թ. N 1333-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 273.5 քմ արտաքին մակերեսով տնտեսական սենյակը սահմանված դրույքաչափին համապատասխան արժեքով և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0.02735 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-080-0107-0073/ ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքով օտարել Դավիթ Համլետի Ներկարարյանին:
4. ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, Ալավերդի քաղաք, Սանահին Սարահարթ թաղամաս, 45/8 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 17.09.2024թ. N 1365-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 50.7 քմ արտաքին մակերեսով նկուղով ավտոտնակը սահմանված դրույքաչափին համապատասխան արժեքով և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0.0037 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-002-0150-0162/ ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքով օտարել Կարեն Գառնիկի Երիցյանին:
5. Առաջարկել Ալավերդի համայնքի ղեկավարին՝ կառույցներն իրականացրած անձանց հետ կնքելու կառույցի և զբաղեցրած հողամասի ուղղակի վաճառքի պայմանագրեր:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց.

			ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1.	ԴԱՎԻԹ	ՂՈՒՄԱՇՅԱՆ			
2.	ԼՈՐԱ	ՍԱՐԳՍՅԱՆ			
3.	ՀԱՄԼԵՏ	ՂՈՒԼՅԱՆ			
4.	ԱՐՄԻՆԵ	ԵՐԻՑՅԱՆ			
5.	ՄԿՐՏԻՉ	ՄԱՐԳԱՐՅԱՆ			
6.	ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	ՁԱՎԱՐՅԱՆ			
7.	ՖԼՈՐԱ	ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ			
8.	ԴԱՎԻԹ	ՍԱՐԳՍՅԱՆ			
9.	ՀՐԱՆՏ	ՀԱԽՎԵՐԴՅԱՆ			

10.	ԱՆԱՀԻՏ	ՍՄԲԱՏՅԱՆ			
11.	ԱՐՏԱԿ	ԳԵՎՈՐԳՅԱՆ			
12.	ԱՐԵՆ	ԴԱԼԼԱՔՅԱՆ			
13.	ՀԱՅԿ	ՀՈՎԱԿԻՄՅԱՆ			
14.	ՍԻՄՈՆ	ԶԱԽԱՐՈՎ			
15.	ՆԱՐԻՆԵ	ԹՈՐՈՍՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2024թ., նոյեմբերի 12,
Լոռու մարզ, ք. Ալավերդի